մուտքն՝ լիով անթերի կու տամք, և աղէկ սրտով կ'ուղարկաւորեմք։ Ձեր հրամանքդ այլ մեր ազգիս որ ի հոս եմք բնակեալ՝ մէկ բարութիւն արէք, որ անջինջ յիշատակ մնայ ի միջի մերում. որպէս զքաջ հովիւ զհօտդ արածէ, և զմեր կեր[1] գայլու մի՛ տար. որ յանաչառ ատենին ասես, թէ Ահա ես և մանկունք իմ։ Եւ այդ բաւէ աստուածիմաստ և խոհեմամիտ անձանցդ։

Ողջ լերուք ի Տէր յամենայն ժամ, վասն մեր.

Գրեցաւ քարտէզս ի յաշխարհս Իլախաց ի քաղաքս Իլով, ըստ ի մեզ մարդեղութեանն Քրիստոսի՝ ՌՇՀԲ ամի, և ի մերում յաբեդական տումարի ի յորեւլինի և ԻԱ աւելի,[2] յամսեանն ապրիլի Հռովմայեցոց ամսի, ԺԵ համարի յօրն։ Ձեռամբ թերավարժ գրչի Ի. Բ. Գ. Ժ. Ի. Բ. (?)

Ը.

ԹՈՒՂԹ ԱՍՏՈՒԱԾԱՏՐՈՅ ՊԱՏՐԻԱՐՔԻ Ի ԼԵՀՍ

Վասն Ծառայատկին և Վասն Լուսոյն. Երուսաղեմի. 1589.

Ի Տէր Աստուածատուր վարդապետէ և պատրիարգ Կոստանդնուպօլսի մայրաքաղաքի աթոռակալէ, և Երուսաղեմայ Քրիստոսի գերեզմանին լուսարար Տէր Սամուէլ եպիսկոպոսէ. Սիրով Աստուած Սուրբ Հոգոյն ժամանեալ հասցէ ողջոյն և խաղաղութիւն և առաքելական ուրհնութիւն, ի յամէնաւրհնեալ, և յաստուածապահ երկիրն Իլախաց. ի Լօվն և ի Կամէնիցն և յայլ ամենայն թէմն իւր առ հասարակ. ի Քրիստոս Աստուած հաւատարիմ ըստ հոգոյ յոյժ սիրեցեալ ցանկալի և փափաքելի պարծանաց որդոցդ. Նախ և առաջին, Տէր Գալուստ եպիսկոպոսին, և քահանայիցն և երեսփոխաներուն, և տանուտէրացն, հաւասար մեծի և փոքու, մեծաւ փափաքմամբ ի շնորհացն Քրիստոսի, աղօթիւք Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ, կարողութեամբն Աստուծոյ Հօր, ի ձեռն Հոգոյն Սրբոյ, առաքեմք ողջոյն սիրոյ ի մէնջ և ուրհնութիւն առաքելական.

Գիտութիւն լիցի ձեզ ամենեցուն, սիրելի որդիք մեր ի Քրիստոս, զի ըստ

1. Մեր կերակուրն, մեր ուտելիքն։
2. Այսինքն ՌԻԱ Հայոց, 1572։